ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1068-12.05.2025-ՊԱ-011/0) ԵՎ «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 5-րդ հոդված	Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ ՍԴՈ-1506 որոշմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ ոստիկանության ծառայողի համար ինքնին որևէ կրոնական կազմակերպությանն անդամակցելու և անդամակցության համար վարքագծի կոնկրետ դրսևորումներով չպայմանավորված բացարձակ արգելք սահմանելու մասով, ճանաչվել է Սահմանադրության 41-րդ հոդվածին և 45-րդ հոդվածին հակասող և անվավեր: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			մասին» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 5-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 5. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ . «7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական միավորման (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների, ինչպես նաև արհեստակցական և կրոնական կազմակերպությունների) անդամ, իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու համար, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.»:		

			Միաժամանակ առաջարկվում է վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 6-րդ հոդված	Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1757 որոշմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների «բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» ձևակերպումը ճանաչվել է Սահմանադրության 49-րդ հոդվածին և 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, հակասող և անվավեր: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 6-րդ հոդվածով՝ հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 5. Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասություններից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:»: Միաժամանակ առաջարկվում է վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

3.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ (լրամշակված տարբերակում՝ 7-րդ) հոդված	Հիմք ընդունելով օրենսդրական տեխնիկայի պահանջները՝ առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ (լրամշակված տարբերակում՝ 7-րդ) հոդվածի 2-րդ և 3-րդ մասերից հանել «1-ին մասի» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
4.	**ՀՀ կառավարություն**	«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ («Փրկարար ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս)	Փրկարարական ծառայության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների մասնագիտական կարողությունների առավել հաճախակի գնահատման և շարունակական զարգացման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև՝ հաշվի առնելով Ներքին գործերի նախարարության ոստիկանության և փրկարար ծառայության ծառայողների վերապատրաստման կապակցությամբ միասնական քաղաքականության իրականացումը, առաջարկում ենք նախատեսել կարգավորումներ՝ փրկարարական ծառայության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների պարտադիր վերապատրաստման հինգ տարին մեկ պարբերականության փոխարեն ամեն տարի պարտադիր	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			վերապատրաստվելու կապակցությամբ: Գործընթացի մեկնարկի համար ողջամիտ ժամկետ ապահովելու նպատակով առաջարկում ենք նշված կարգավորումն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2026թ. հունվարի 1-ը: Ըստ այդմ, առաջարկում ենք փաթեթում ներառել «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***Հոդված 1.*** «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի		

			ՀՕ-171-Ն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «հինգ տարին մեկ» բառերը փոխարինել «տարին մեկ անգամ» բառերով: ***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:»:		